ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արարատ համայնքի հարգելի՛ բնակիչներ, երկրապահներ, զինվորներ ու սպաներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ այս կարևոր տոնի՝ Երկրապահի օրվա կապակցությամբ:

Անհերքելի փաստ է , որ այսօրվա մեր լինելիության, մեր երկրի անկախության ու կայացման գործում միշտ էլ անգնահատելի ու անժխտելի կարևոր է եղել մեր երկրապահի դերն ու նշանակությունը: Երկրապահները՝ սպարապետ Վազգեն Սարգսյանի գլխավորությամբ առաջինն իրենց վրա վերցրեցին մեր անկախ հայրենիքի պաշտպանության պատասխանատվությունը՝ դառնալով Հայոց ազգային բանակի կազմավորման հիմքն ու հիմնաքարը:

Երկրապահի տոնը նաև խոնարհումի օր է իրենց կյանքը հայրենիքին նվիրած մեր նահատակների և այն զոհված ազատամարտիկների հիշատակի առաջ, ովքեր անառիկ պահեցին մեր երկրի սահմանները, հավատ ներշնչելով նաև մեր այսօրվա և վաղվա օրվա հանդեպ: Առանձնահատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել զոհված ազատամարտիկների ծնողներին, այրիներին և զավակներին, շնորհակալ ենք ձեր սիրո և համբերության համար:

Մեկ անգամ ևս շնորհավորելով Երկրապահի օրվա առթիվ՝ մաղթում եմ բոլորիս խաղաղություն, առողջություն և միասնականություն:

Հավերժ փա՛ռք նահատակված մեր բոլոր քաջորդիներին...

Հավերժ հիշատակ սպարապետ Վազգեն Սարգսյանին...

Փա՛ռք երկրապահին, ազատամարտիկներին, մեր բանակին և սահմանը հսկող մեր զինվորներին...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ